ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԱՄԿ 27/21

ք. Երևան 25 մայիսի 2021թ.

«Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը, այսուհետ՝ Կատարող, ի դեմս ռեկտոր Ռուբեն Կառլենի Միրզախանյանի, ով գործում է հիմանադրամի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Նարինե Գարեգինի Ղարիբյանի, այսուհետ՝ Պատվիրատու ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ՝ 2021 թվականի հունիսի 1–ից ՝մինչև հունիսի 11–ը «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ դասախոսների համար կազմակերպվող մասնագիտական վերապատրաստման դասընթացի ընթացքում իր մասնագետների միջոցով իրականացնել դասախոսություններ մանկավարժական և զարգացման հոգեբանություն, ուսուցման ժամանակակից մեթոդներ, ինֆորմացիոն տեխնոլոգիաները կրթության ոլորտում առարկաների գծով, այսուհետ՝ Ծառայություններ:

1.3. Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից կատարողական ակտի ստորագրման պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2.Ծառայությունները մատուցելիս ապահովել բարձր մասնագիտական որակ.

2.2. Պատվիրատուն պարտավոր է Ծառայությունների համար վճարել սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.3.2. Մինչև ակտի ստորագրումը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին համապատասխան:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Սույն պայմանագրի գինը ծառայությունների մատուցման համար կազմում է 300.000 ՀՀ դրամ:

3.2. Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է՝ կատարողական ակտի ստորագրումից հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ՝ սույն պայմանագրում նախատեսված հաշվեհամարին փոխանցում կատարելու միջոցով:

4. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

5.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երեք օրինակից:

5.3 Վեճերի և տարաձայնությունների դեպքում հիմք է ընդունվում պայմանագրի հայերենի տարբերակը:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող	Պատվիրատու
«Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ	«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 17	ք.Երևան «Զվարթնոց» օդանավակայան
ՀՎՀՀ 02527624	ԱՇԲ «Զվարթնոց» մ/ճ
Հ/Հ՝ «Արարատ» բանկ	ՀՎՀՀ 01204026
1510002308480100	Հ/Հ «Արդշինբանկ»
	2470642071180000
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյան	«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Նարինե Ղարիբյան
_____ (ստորագրություն և կնիք)	_____ (ստորագրություն և կնիք)

<<ԱՎԻԱՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

N	01.06	02.06	03.06	04.06	07.06	08.06	09.06	10.06	11.06
1.	Մանկավարժական և զարգացման հոգեբանություն, հոգ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Կամո Վարդանյան	Մանկավարժական և զարգացման հոգեբանություն, հոգ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Կամո Վարդանյան	Մանկավարժական և զարգացման հոգեբանություն, հոգ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Կամո Վարդանյան	Ինֆորմացիոն տեխնոլոգիա-ները կրթության ոլորտում, ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ Վահագն Խառատյան	Ինֆորմացիոն տեխնոլոգիա-ները կրթության ոլորտում, Մանկ. գիտ. թեկ., դոցենտ Ասատրյան Սամվել	Ուսուցման ժամանակակից մեթոդներ, մանկ.գիտ.թեկն., դոցենտ Հակոբ Թադևոսյան	Ուսուցման ժամանակակից մեթոդներ, մանկ.գիտ.թեկն., դոցենտ Հակոբ Թադևոսյան	Ուսուցման ժամանակակից մեթոդներ, մանկ.գիտ.թեկն., դոցենտ Հակոբ Թադևոսյան	Ինֆորմացիոն տեխնոլոգիա-ները կրթության ոլորտում, Մանկ. գիտ. թեկ., դոցենտ Ասատրյան Սամվել
2.	Մանկավարժական և զարգացման հոգեբանություն, հոգ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Կամո Վարդանյան	Մանկավարժական և զարգացման հոգեբանություն, հոգ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Կամո Վարդանյան	Մանկավարժական և զարգացման հոգեբանություն, հոգ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Կամո Վարդանյան	Ինֆորմացիոն տեխնոլոգիա-ները կրթության ոլորտում, ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ Վահագն Խառատյան	Ինֆորմացիոն տեխնոլոգիա-ները կրթության ոլորտում, Մանկ. գիտ. թեկ., դոցենտ Ասատրյան Սամվել	Ուսուցման ժամանակակից մեթոդներ, մանկ.գիտ.թեկն., դոցենտ Հակոբ Թադևոսյան	Ուսուցման ժամանակակից մեթոդներ, մանկ.գիտ.թեկն., դոցենտ Հակոբ Թադևոսյան	Ուսուցման ժամանակակից մեթոդներ, մանկ.գիտ.թեկն., դոցենտ Հակոբ Թադևոսյան	Ինֆորմացիոն տեխնոլոգիա-ները կրթության ոլորտում, Մանկ. գիտ. թեկ., դոցենտ Ասատրյան Սամվել

Ծանոթություն: Դասերը սկսվում են ժամը 14:00-ին: